պիրատութեանս, յորմէ ամաչեցայց։ Ապա թէ ոչ՝ զի՞ հարկանէք զիս, ըստ Քրիստոսի թախանձանացն, զի՞ կռփահարէք զիս, ընդէ՞ր ցաւեցուցեալ կսկծեցուցանէք զսիրտ իմ։ Թողջիք զիս զտարակուսեալս առ իս. զի թէ ունիցիմ սոգտանք, դատեցայց ես ինքնին. և թէ պարտ իցէ ըստ հարկեցուցիչ հրամանաց ձերոց, անդ ի Սուրբ յԷջմիածին գնացեալ խոստովանել պարտիմ, զի արդ յինէն կանխաճառեցաւ՝ թէ Սուրբ յԵրուսաղէմի կաթողիկոսն ոչ կարէ շինել զսուրբ տունն առանց հնազանդութեան Սուրբ յԷջմիածնի կաթողիկոսին, և յԷջմիածնի կաթողիկոսն ոչ կարէ իշխել Տանս Ցունաց առանց հնազանդութեան Սուրբ յԵրուսաղէմի կաթողիկոսին։ Որովհետեւ այսպէս է, դուք ի բաց կացեալ անմասն լերուք յայսմ յամենայնի, և միայն զսիրոյ եւ զմտերմութեան, զհնազանդութեան եւ զհպատակութեան զհետերթալով՝ զձերունի և զհինաւուրց զհայրդ մեր պատուեսջի՛ք, մեծարեսջի՛ք, զի գոնեա զօրհնութիւն և զաղօթս դորին ամփոփեսջիք ի սիրտս և յոգիս և յանձինս ձեր, որով զօրացեալ և աճեցեալ ամենածազկ զարգացմամբ վերաթեւեսջիք փառաց ի փառս, և զօրութեանց ի զօրութիւնս, ամէն։ [Ռ՚ՃԺԵ = 1666]։

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Սեպտ. 17-ին Պրիսկրմ Պալատին վրայ կատարուած օրային ռմբակոծութեան առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր հեռագիրը, եւ պատասխանը.

Առ Վսեմ. Արքունի Սենեկապետ
Պրիսկրմ Պալատ, Լոնտոն

Հաճեցէք ներկայացնել Նոցին Վեհափառութեանց, մեր եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Պալեստինի Հայ ժողովուրդի սրտագին խնդակցութիւնները եւ գոհաբանական մաղթանքները: Թող Ամենակարողը պաշտպանէ եւ փրկէ ամէն վտանգներէ, եւ օրհնէ անոնց կեանքը փառապանծ խաղաղութեամբ:

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՊԱԼԵՍՏԻՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ԱՒԱԳ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՕՆԱՏՈՒՆ
Երուսաղէմ

3 Դեկտեմբեր 1940

Ձերդ Ամենապատուութիւն

Ակնարկելով Ձեր 17 Սեպտեմբեր 1940 թուակիր հեռագրին, զոր ուղղած էիք Վսեմ. Արքունի Սենեկապետին, Պրիսկրմ Պալաս, վեհափառ Թագաւորի եւ Թագուհւոյն վրայ գործուած ռմբակոծութեան առթիւ, այսու կը տեղեկացնեմ Ձեր Ամենապատուութեան թէ Նորին Վսեմ. Բարձր Դովիսերը պատշաճ ունի ներկայացնելու Ձեր Ամենապատուութեան, Նորին Վեհափառութեան անկեղծ շնորհակալութիւնները Ձեր պատգամին համար:

Մնամ Ձեր Ամենապատուութեան
խոնարհ ծառայ
Ճ. Ս. ՄԱՔՖԷՐՍՊՆ
Աւագ Քարտուղար

ՏՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ

✻ 9 Նոյեմ. Շբ. — Նախատօնակ Գիւս Խաչի. կէսօրէ վերջ, Միաբանութիւնն ամբողջ, գլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, գնաց Ս. Յարութեան Տաճարը։ «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն յետոյ, թափօրով, Միաբանութիւնը իջաւ Հայոց սեպհական Ս. Գրիգոր Լուսաւորիչ վերանորոգուած եկեղեցին, ուր կատարուեցաւ կիրակմտից ժամերգութիւն, և Գիւտ Խաչի Նախատօնակ։ Նախօրօք զարդարուած էին եկեղեցւոյ զոյգ խորանները. և առեանի սրբատաշ քարէ սալայատակը ծածկուած՝ գորգով և կապերտներով։

✻ 10 Նոյեմ. Կիր. — Գիւս Խաչ. առաւօտուն, Ս. Յարութեան Տաճարի մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ ժամերգութիւն, և մատուցուեցաւ Ս. Պատարագ։ Յաւարտ Ս. Պատարագի, Քրիստոսի Դերեզմանին շուրջ եռադարձ թափօր կատարուեցաւ մեծահանդէս շուքով և երգեցողութեամբ. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, կենաց Փայտը ի ձեռին ամպհովանիի ներքև կը նախագահէր հանդիսութեանց։ — Ս. Պատարագի ընթացքին, համաձայն Նորին Վեհ. Մեծին Բրիտանիոյ ձորհ Զ. Թագաւոր-կայսեր բաղձանքին, աղօթք եղաւ բոլոր այն հոգիներուն համար, որոնք ինկան այս վերջին տարիներու ճակատամարտներու ընթացքին։ Եւ Նոյեմբեր 11ը փոխանակ իբրև Զինադադարի օր տօնելու, յարմար նկատուած էր յիշատակի օր համարել, պատերազմի այս տարիներուն գոնէ։

Ինչպէս այսօր, նոյնպէս նաև երէկ, պաշտամունքներուն ներկայ էր խուռն բազմութիւն մը հաւատացեալներու, մեղմացած ըլլալուն համար կառավարութեան կողմէ դրուած արգելքը, ժողովրդական մուտքին համար Ս. Յարութեան Տաճարէն ներս։

digitised by A.R.A.R.@

✻ 17 Նոյեմ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. քարոզեց Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., բնաբան առնելով «Հոգի է Աստուած, եւ երկրպագուաց Նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել» խօսքը. Ներկայացուց պաշտամունքը իբրև տիեզերական երեւոյթ. և սակայն, ըսաւ, ամենէն պարզ և ուղիղ բացատրութիւնը այդ իրողութեան, Յիսուսի վերոյիշեալ խօսքն էր։ Ապա ցոյց տուաւ թէ պաշտամունքին առարկան Աստուած է միայն, զոր պէտք չէ կապել ոև է տեղի և ժամանակի. զԱյն պարտինք պաշտել, որովհետև կրօնքը ընծային զգացում մըն է մարդուն հոգիին մէջ, և իբրև Արարիչ, Իր իրաւունքն է պահանջել մեզմէ այդ պաշտանքը։

✻ 22 Նոյեմ. Ուր. — Նախատօնակ Հրեշտակապետաց. Միաբանութիւնը Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, իջաւ Ս. Հրեշտակապետաց վանուց եկեղեցին, ուր կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը, և ապա՝ Սրբոց Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միխայէլի Նախատօնակը։

✻ 23 Նոյեմ. Շբ. — Տօն Հրեշտակապետաց. Ս. Պատարագ՝ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին. քարոզեց Տ. Նորայր Վրդ., բնաբան առնելով «Զգոյշ լերուք՝ մի՛ արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ» խօսքը. ըսաւ՝ Հրեշտակները Աստուծոյ սպասաւորներն են, մարդոց այնքան մօտիկ ղրկուած, պահպանելու համար զանոնք։ Եւ մարդը այնքան բարձր արժէք ունի Աստուծոյ աչքին, որ հրեշտակներ նշանակած է անոր իբր պահպան։ Աստուծոյ օրինակով, մենք ալ պարտաւոր ենք օգնել իրարու, կարեւորութիւն տալով նոյնիսկ մանուկներուն, որոնց մէջ արժէք մը կայ։ — Ս. Պատարագէն յետոյ, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ս. Հրեշտակապետաց վանուց Տեսչարանին մէջ։

✻ 24 Նոյեմ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխադրի մատրան մէջ։ Քարոզեց Տ. Դէորգ Վրդ., «Երանի ոյք պահեն զիրաւունս, և առնեն զարդարութիւն յամենայն ժամ» բնաբանին վրայ։ Անդրադառնալով աշխարհի ներկայ անստոյգ և յուզաշրջուած կացութեան, քրիստոնեաներուն պարտականութիւնն է, ըսաւ, ըլլալ զգաստ եւ արթուն, սուրբ եւ պարկեշտ, տանելի դարձնելու համար տագնապալից այս օրերը։ Յորդորեց հաւատքով աղօթել աշխարհի խաղաղութեան համար։

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1940 տարւոյ ընթացքին եղած հետեւեալ բարեպաշտական նուէրները.

1. Երուսաղէմաբնակ Տիկին Մարիամ Քէօշկէրեան՝ սպիտակ կտաւէ ինքնաձեռագործ սեղանի ծածկոց մը։

2. Այնթապցի Տիար Պետրոս Կիրակոսեան՝ փոքր գորգ մը։

3. Երուսաղէմաբնակ Տիկին Մարի Քիւննիւքճեան՝ մէկ ձեռք պատարագի քահանայական ըզգեստ՝ իր ձեռքով կարուած։

4. Աղեքսանդրաբնակ Այրի Տիկին Մարի Մամուրեան՝ երկու արծաթ կանթեղ, մին Ս. Աստուածածնի գերեզմանին համար, միւսը Առաքելական Աթոռին։ Վեց մասերէ բաղկացեալ ներքին վարագոյրներ Ս. Աստուածածնի գերեզմանին համար, ու սեղանի եւ գրակալի ծածկոցներ։ Ս. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորչի եկեղեցիին համար երկու ասեղնագործուած սեղանի ծածկոցներ։ Բեթղեհէմի Ս. Ծննդեան Այրին համար մէկ պղնձեայ ջրօրհնեաց կաթսայ, եւ Ս. Յակոբայ Տաճարին համար բուրվառներու երկաթեայ պահարան մը։

5. Երուսաղէմաբնակ Պրուսացի Տիկին Աննիկ Եսայեան՝ Ս. Գլխադրին սպիտակ կտաւէ սեղանի ծածկոց մը։

6. Երուսաղէմաբնակ Տիկին Ովսաննա Զաքարեան՝ Ս. Գլխադրի սեղանին ինքնաձեռագործ դանթէլ կորփուրայ մը։

7. Աղեքսանդրաբնակ Օր. Արուսեակ Թահմազեան՝ Ս. Յակոբայ Տաճարին՝ սնդուսի վրայ ասեղնագործուած ինքնաձեռագործ կորփուրայ մը։

8. Հալէպաբնակ Այնթապցի Օր. Տիրուհի Պալլօզեան՝ Սրբոց Յակոբեանց Տաճարին՝ ինքնաձեռագործ կորփուրայ մը։

9. Դահիրէաբնակ Տիկին Հայկուհի Պոյաճեան՝ Սրբոց Յակոբեանց Տաճարին՝ աւետարանի արծաթեայ երես մը և խաչ մը։

10. Հալէպաբնակ Տիգրանակերտցի Տիկին Մարիամ Ճիլմէճեան՝ Ս. Գլխադրին՝ մէկ ոսկի ապարանջան։

11. Պէյրութաբնակ Պալըքէսիրցի Տիկին Հռիփսիմէ Քէշիշեան՝ Սրբոց Յակոբեանց Տաճարին՝ սնդուսէ ծածկոց մը։

12. Երուսաղէմցի Պր. Գրիգոր Յակոբ Մնացկանեան՝ Ս. Գլխադրին մէկ արծաթեայ թէլքիարի կանթեղ։

13. Երուսաղէմաբնակ Տիգրանակերտցի Այրի Տիկին Աննա Զարզավաթճեան՝ Սրբոց Յակոբեանց Տաճարին՝ մէկ կապոյտ մետաքսեայ վարագոյր։

14. Ատարազարցի Օր. Փարիս Ալենանեան՝ Ս. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորչի եկեղեցիին համար մէկ կարմիր թաւշեայ ասեղնագործուած ինքնաձեռագործ սեղանի ծածկոց ճերմակ կտաւէ ընկերով միասին, և չորս փունջ ինքնաձեռագործ մետաքսեայ ծաղիկներ։

15. Երուսաղէմաբնակ Կարնեցի Տիկին Արմենուհի Պալայեան՝ Սրբոց Յակոբեանց Տաճարին՝ մէկ ճերմակ սեղանի ծածկոց։

16. Ս. Աթոռոյս Փառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի ուսուցիչ Տիար Շահան Պէրպէրեան՝ մէկ արծաթեայ կանթեղ Ռէմլէի Սուրբ Դէորգ եկեղեցիին համար։

17. Երուսաղէմաբնակ Մարաշցի Տիար Սարգիս Պէհէանիլեան՝ մէկ արծաթ կանթեղ Ռէմլէի Ս. Դէորգ եկեղեցիին համար։

18. Խարթումաբնակ Տիկին Հայկուհի Գապատայեան՝ Սրբոց Յակոբեանց Տաճարին՝ ինքնաձեռագործ մէկ սպիտակ կտաւէ ասեղնագործուած սեղանի ծածկոց։

19. Խարթումաբնակ Տիկին Անժէլ Գալփագեան՝ ինքնաձեռագործ սպիտակ կտաւէ կորփուրայ մը։

Լուսարարապետ

ԿԻՒՐԵՂ Ծ. ՎՐԴ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Proprietor – His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor – Father Torkom Manoukian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@